

Հարց. Հաշվի առնելով «Փողերի լվացման և ահաբեկչության ֆինանսավորման դեմ պայքարի մասին» ՀՀ օրենքի 16-րդ հոդվածի 5-րդ մասի 2-րդ կետի և 27-րդ հոդվածի 1-ին և 2-րդ մասերի պահանջները, ինչպես նաև «Փողերի լվացման և ահաբեկչության ֆինանսավորման դեմ պայքարի մասին» ՀՀ օրենքի 9-րդ հոդվածի 1-ին մասի, «Իրավաբանական անձանց պետական գրանցման, իրավաբանական անձանց առանձնացված ստորաբաժանումների, հիմնարկների և անհատ ձեռնարկատերերի պետական հաշվառման մասին» ՀՀ օրենքի 66-րդ հոդվածի 3-րդ մասի և 36-րդ հոդվածի 4-րդ մասի պահանջները՝ ինչպե՞ս պետք է վարվի հաշվետվություն տրամադրող անձը իրավաբանական անձի իրական շահառուին պարզելիս և (կամ) նույնականացնելիս, այդ թվում՝ այն դեպքերում երբ առկա է իրավաբանական անձանց անվերջանալի շղթա:

Պատասխան. «Փողերի լվացման և ահաբեկչության ֆինանսավորման դեմ պայքարի մասին» ՀՀ օրենքի (այսուհետ՝ Օրենք) 16-րդ հոդվածի 5-րդ մասը սահմանում է, որ հաշվետվություն տրամադրող անձը պետք է պարզի, թե արդյոք հաճախորդը հանդես է գալիս իր կամ այլ անձի անունից և (կամ) օգտին: Հաշվետվություն տրամադրող անձը պետք է «պարզի իրական շահառուի առկայությունը և առկայության դեպքում, սույն հոդվածի 1-4-րդ և 8-րդ մասերին համապատասխան, նույնականացնի իրական շահառուին ու ստուգի նրա ինքնությունը»:»:

Այս պահանջը բխում է ՖԱԹՖ-ի 10-րդ և 22-րդ հանձնարարականներից, որոնք հաճախորդի պատշաճ ուսումնասիրության շրջանակում հաշվետվություն տրամադրող անձանցից պահանջում են նույնականացնել իրական շահառուին և իրական շահառուի ինքնությունը ստուգելու նպատակով ձեռնարկել ողջամիտ քայլեր, որոնք հաշվետվություն տրամադրող անձին թույլ կտան վստահանալ, որ իրեն հայտնի է իրական շահառուի ով լինելը. ընդ որում, իրավաբանական անձ կամ կազմավորում հանդիսացող հաճախորդների դեպքում հաշվետվություն տրամադրող անձը պետք է պատկերացում ունենա հաճախորդի սեփականատերերի և կազմակերպության նկատմամբ հսկողություն իրականացնող անձանց մասին:

Օրենքի 9-րդ հոդվածի 1-ին մասը սահմանում է, որ իրավաբանական անձի պետական գրանցման դեպքում հիմնադիրները պարտավոր են իրավաբանական անձանց գրանցող պետական մարմնին (այսուհետ՝ Պետական ռեգիստր) ներկայացնել իրավաբանական անձի իրական շահառուների վերաբերյալ հայտարարություն: Միևնույն ժամանակ, «Իրավաբանական անձանց պետական

գրանցման, իրավաբանական անձանց առանձնացված ստորաբաժանումների, հիմնարկների և անհատ ձեռնարկատերերի պետական հաշվառման մասին» ՀՀ օրենքի 66-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ իրավաբանական անձը պարտավոր է պետական գրանցման, կանոնադրական կապիտալի կամ մասնակիցների կազմի փոփոխվելու դեպքում Օրենքով սահմանված կարգով Պետական ռեգիստր ներկայացնել իրավաբանական անձի իրական շահառուների վերաբերյալ հայտարարություն:

Այս պահանջը բխում է ՖԱԹՖ-ի 24-րդ հանձնարարականից, որը երկրներից պահանջում է ապահովել իրավաբանական անձանց իրական շահառուների և իրավաբանական անձանց նկատմամբ հսկողություն իրականացնող անձանց վերաբերյալ համարժեք, ստույգ և արդիական տեղեկությունների առկայությունը:

Իրավաբանական անձանց իրական շահառուների բացահայտմանն է անդրադառնում 2014 թվականի ՖԱԹՖ-ի Թափանցիկության և իրական շահառուների բացահայտման ուղեցույցը (այսուհետ՝ Ուղեցույց), որի 32-րդ կետով սահմանվում են հաշվետվություն տրամադրող անձանց (և Պետական ռեգիստրի) կողմից իրականացման ենթակա հաջորդական գործողությունները: Մասնավորապես, ֆինանսական և ոչ ֆինանսական հաստատությունները պետք է պարզեն և նույնականացնեն, իսկ Պետական ռեգիստրը պետք է պարզի.

1. այն ֆիզիկական անձանց, ովքեր իրավաբանական անձի կապիտալում իրենց մասնակցության ուժով վերջնական հսկողություն են իրականացնում այդ անձի նկատմամբ (առկայության դեպքում, քանի որ բաժնեմասերի սեփականության բազմաբնույթ լինելով պայմանավորված հնարավոր է, որ այդպիսի ֆիզիկական անձինք (անհատապես կամ համատեղ գործող) ի վերջո գոյություն չունենան),
2. որևէ այլ միջոցներով իրավաբանական անձի նկատմամբ հսկողություն իրականացնող ֆիզիկական անձանց (առկայության դեպքում), եթե առկա են կասկածներ առ այն, թե արդյոք 1-ին կետում նշված իրավաբանական անձի կապիտալում վերահսկիչ բաժնեմասի սեփականատեր ֆիզիկական անձն (անձինք) է (են) իրական շահառու(երը), կամ եթե որևէ ֆիզիկական անձ իր բաժնեմասի ուժով հսկողություն չի իրականացնում իրավաբանական անձի նկատմամբ,

3. իրավաբանական անձի ավագ ղեկավարի պաշտոնը զբաղեցնող ֆիզիկական անձին, եթե 1-ին և 2-րդ կետերում նշված որևէ ֆիզիկական անձի պարզել չի հաջողվում:

Այսպիսով, բոլոր այն դեպքերում, երբ հնարավոր չի լինում պարզել և (կամ) նույնականացնել 1-ին, ապա 2-րդ կետով նախատեսված ֆիզիկական անձանց ինքնությունը, ՖԱԹՖ-ի հանձնարարականները հնարավորություն են տալիս կանգ առնել իրավաբանական անձի իրական շահառուն պարզելու և (կամ) նույնականացնելու գործընթացի հարցում պարզելով և (կամ) նույնականացնելով իրավաբանական անձի ավագ ղեկավարի պաշտոնը զբաղեցնող ֆիզիկական անձի ինքնությունը: Այս տեսանկյունից պետք է նշել, Օրենքի 3-րդ հոդվածի 1-ին մասի 14-րդ կետը սահմանում է, որ իրավաբանական անձի շահառու կարող է հանդիսանալ, ի թիվս այլոց, տվյալ իրավաբանական անձի կառավարման և (կամ) ղեկավար մարմնի անդամը:

2014 թվականի ՖԱԹՖ-ի Թափանցիկության և իրական շահառուների բացահայտման ուղեցույցը պարզաբանում է, թե ովքեր են այն ֆիզիկական անձինք, ովքեր կարող են իրավաբանական անձի նկատմամբ հսկողություն իրականացնել որոշակի պաշտոն զբաղեցնելու միջոցով: Որպես այդպիսիք, մասնավորապես հանդես են գալիս ֆիզիկական անձը (անձինք), ով(քեր) պատասխանատու է (են) ռազմավարական որոշումների համար, որոնք արմատական ազդեցություն ունեն բիզնեսի կամ իրավաբանական անձի գործունեության ընդհանուր ուղղության վրա կամ ֆիզիկական անձը (անձինք), ով(քեր) ղեկավար պաշտոն զբաղեցնելու միջոցով գործառնական հսկողություն է (են) իրականացնում իրավաբանական անձի ամենօրյա կամ կանոնավոր գործունեության նկատմամբ, ինչպիսիք են, օրինակ, գլխավոր գործադիր տնօրենը, գլխավոր ֆինանսական տնօրենը, ավագ կամ գործադիր տնօրենը կամ նախագահը¹:

Ուղեցույցով ներկայացվող պարզաբանումներին առավել մանրամասն կարող եք ծանոթանալ հետևյալ հղմամբ՝

https://www.cba.am/Storage/AM/downloads/FDK/Guidelines/Guidance_on_tbo_arm.pdf:

Այն դեպքում, երբ հաջորդական գործողություններից վերջինի իրականացումը նույնպես չի հաջողվում, ֆինանսական և ոչ ֆինանսական հաստատությունները պետք է Օրենքի 27-րդ հոդվածի 1-ին և 2-րդ մասով սահմանված կարգով մերժի կամ

¹ ՖԱԹՖ-ի Թափանցիկության և իրական շահառուների բացահայտման ուղեցույց, 2014 թ., էջ 24-25

դադարեցնի գործարքի կամ գործարար հարաբերության իրականացումը և դիտարկի այն կասկածելի որակելու հարցը, իսկ Պետական ռեգիստրը պետք է «Իրավաբանական անձանց պետական գրանցման, իրավաբանական անձանց առանձնացված ստորաբաժանումների, հիմնարկների և անհատ ձեռնարկատերերի պետական հաշվառման մասին» ՀՀ օրենքի 36-րդ հոդվածի 4-րդ մասի համաձայն մերժի իրավաբանական անձի գրանցումը: